

Հավելված N 1
«Հավատարմագրման ազգային
մարմին» ՊՈԱԿ-ի տնօրենի
«06» «02» 2015 թ.
N 1 - Պ հրամանի

ՄԻՆՉՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N - ՄՊ

ք. Երևան

«-----» «-----» 201 թ.

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը, համաձայն իր կանոնադրության և «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի, որպես հավատարմագրման ազգային մարմին (այսուհետ՝ ՀԱՄ) ի դեմս ՀԱՄ-ի տնօրեն ----- մի կողմից, և ----- ի դեմս կազմակերպության ղեկավար----- (կազմակերպության անվանումը)

----- մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համաձայն գրանցված N --- առ «-----» «-----» 201 թ. հայտի՝ ՀԱՄ-ը պարտավորվում է կատարել հավատարմագրման հավակնող -----

(կազմակերպության անվանումը)

----- (այսուհետ՝ ՀԳՄ)

(համապատասխանության գնահատման մարմնի տեսակը)

----- պահանջներին համապատասխան (փաստաթղթեր)ի անվանումները կամ նշագիր(եր)ը հավատարմագրման աշխատանքներ, իսկ ՀԳՄ-ն իր հերթին պարտավորվում է կատարել վերը նշված փաստաթղթ(եր)ի պահանջ(ներ)ը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՀԳՄ-ի իրավունքները և պարտավորությունները.

2.1.1. ՀԳՄ-ն իրավունք ունի՝

- 1) տալ համաձայնություն առաջին հավատարմագրման դեպքում ՀԱՄ-ի կողմից նախնական այցի իրականացման վերաբրյալ.
- 2) ներկայացնել հիմնավոր առարկություն գնահատման խմբի կազմում ընդգրկված կոնկրետ գնահատողի կամ փորձագետի նշանակման վերաբերյալ.
- 3) պահանջել փաստաթղթերի փորձաքննության(ների)և ըստ գտնվելու վայրի գնահատման(ների) արդյունքների հաշվետվությունները.
- 4) հավատարմագրման գործընթացի յուրաքանչյուր փուլում հետ վերցնել հավատարմագրման հայտը՝ վճարելով մինչ այդ կատարված աշխատանքների համար.
- 5) դիմել բողոքարկման հանձնաժողովին հավատարմագրման գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ՀԱՄ-ի կողմից ընդունված որևէ անբարենպաստ որոշման վերանայման պահանջով.
- 6) հավատարմագրման մերժման դեպքում գրավոր ստանալ մերժման հիմքերը:

2.1.2. ՀԳՄ-ն պարտավոր է՝

- 1) ներկայացնել հավատարմագրման համար պահանջվող փաստաթղթերը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
- 2) նշանակել ՀԱՄ-ի հետ կապի պատասխանատու հավատարմագրման աշխատանքների կատարման համար.
- 3) սահմանված ժամկետում կատարել վճարումներ հավատարմագրման աշխատանքների իրականացման համար՝ անկախ հավատարմագրման արդյունքներից.
- 4) գրավոր ներկայացնել ՀԱՄ-ին իր համաձայնությունը գնահատման ծրագրի վերաբերյալ.
- 5) փաստաթղթերի փորձաքննության արդյունքում հայտնաբերված հավատարմագրման չափանիշներին անհամապատասխանությունների դեպքում ՀԱՄ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացնել փաստաթղթերի լրամշակված տարբերակը.
- 6) ՀԱՄ-ին ապահովել գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունից, փաստաթղթերից և հաշվետվություններից օգտվելու հասանելիությունը.
- 7) ապահովել գնահատման խմբի մուտքը ՀԳՄ-ի տարածք սարքավորումներից, համապատասխան տեղեկատվությունից օգտվելու համար և ցուցաբերել այլ անհրաժեշտ աջակցություն ըստ գտնվելու վայրի գնահատումն իրականացնելու ժամանակ.
- 8) գնահատման խմբի կողմից հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում մշակել և ՀԱՄ-ին ներկայացնել ուղղիչ գործողությունների ծրագիր.
- 9) սահմանված ժամկետում ՀԱՄ-ին ներկայացնել գնահատման խմբի կողմից հայտնաբերված անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ տեղեկատվություն.
- 10) կիրառելիության դեպքում, մասնակցել միջլաբորատոր համեմատություններին և (կամ) որակավորման սուուգման ծրագրերին և դրանց վերաբերյալ ՀԱՄ-ին տրամադրել համապատասխան տեղեկատվություն.
- 11) հավատարմագրմանը հավակնող ոլորտում պատշաճ կերպով պահպանել հավատարմագրման կանոնները, ընթացակարգերը և մշտապես համապատասխանել ստանդարտների, նորմատիվ փաստաթղթերի և իրավական ակտերի պահանջներին.
- 12) կնքել ՀԱՄ-ի հետ հավատարմագրման պայմանագիր հավատարմագրման մասին դրական որոշման ընդունման դեպքում:

2.2. ՀԱՄ-ի իրավունքները և պարտավորությունները.

2.2.1. ՀԱՄ-ը իրավունք ունի՝

- 1) մերժել ՀԳՄ-ի հավատարմագրումը պայմանագրով սահմանված ժամկետում ՀԳՄ-ի կողմից վճարում չկատարելու դեպքում.
- 2) մերժել ՀԳՄ-ի հավատարմագրումը՝ սահմանված ժամկետում ՀԳՄ-ի կողմից փաստաթղթերի լրամշակված տարբերակը և գնահատման խմբի կողմից հայտնաբերված անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ տեղեկատվությունը չներկայացնելու դեպքում.
- 3) փաստաթղթերի լրացուցիչ փորձաքննության բացասական եզրակացության դեպքում կասեցնել ՀԳՄ-ի գնահատման գործընթացը մինչև հավատարմագրման տեխնիկական կոմիտեի կողմից համապատասխան որոշման ընդունումը.
- 4) համապատասխանության գնահատման ընթացքում օտարերկրյա գնահատողներ (փորձագետներ) ներգրավելիս ՀԳՄ-ի հետ կնքել լրացուցիչ համաձայնագիր:

2.2.2. ՀԱՄ-ը պարտավոր է՝

- 1) տեղադրել պաշտոնական կայքում հավատարմագրման գործընթացի նկարագրությունը և հավատարմագրման գործընթացին առնչվող փաստաթղթերի ցանկը.

2) ապահովել ՀԳՄ-ի հավատարմագրման գործընթացի իրականացումը ՀՀ կառավարության 2012թ. սեպտեմբերի 6-ի N 1201-Ն որոշման 1-ին կետով սահմանված ՀԳՄ-ների հավատարմագրման կարգին (այսուհետ՝ Կարգ) համապատասխան:

3) հավատարմագրման մասին դրական որոշման ընդունման դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում գրանցել ՀԳՄ-ի հավատարմագրման վկայագիրը հավատարմագրված ՀԳՄ-ների հավատարմագրման գրանցամատյանում և կնքել հավատարմագրման պայմանագիր:

4) ՀԳՄ-ին տրամադրել հավատարմագրման վկայագիր և հավատարմագրման նշան,

5) հավատարմագրումը մերժելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել ՀԳՄ-ին՝ նշելով մերժման հիմքերը,

6) ապահովել հավատարմագրման գործընթացի արդյունքում ստացված տեղեկատվության գաղտնիությունը և չհրապարակել այդ տեղեկատվությունը առանց ՀԳՄ-ի գրավոր համաձայնության, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2.3. Կողմերն իրականացնում են նաև «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքով և Կարգով նախատեսված այլ իրավունքներ և դրանց համապատասխան կրում են այլ պարտականություններ:

3. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Հավատարմագրման աշխատանքների արժեքը հաշվարկվում է ՀԱՄ-ի կողմից սահմանված հավատարմագրման աշխատանքների գների հաշվարկման կարգին համապատասխան՝ համաձայն հավելվածի:

3.2. Հավատարմագրման գործընթացի վճարումները ՀԳՄ-ն կատարում է համաձայն ներկայացված փոխանցման հաշվի՝ 5 բանկային օրվա ընթացքում:

3.3. Սույն պայմանագրով նախատեսված հավատարմագրման աշխատանքների համար գանձվող գումարը ենթակա է վերահաշվարկի, բացառությամբ՝ ՀԳՄ-ի հայտի գրանցման համար վճարված գումարի:

3.4. Հավատարմագրման աշխատանքները համարվում են ավարտված ՀԱՄ-ի կողմից ՀԳՄ-ին ներկայացված կատարողական ակտի և հաշիվ-ապրանքագրի ստորագրման պահից:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

5.1. Պայմանագիրը լուծվում է՝

1) ՀԱՄ-ի կողմից սահմանված ժամկետում փաստաթղթերի փորձաքննության կամ ՀԳՄ-ի ըստ գտնվելու վայրի գնահատման ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունները չվերացնելու դեպքում:


2) սահմանված ժամկետում վճարումներ չկատարելու դեպքում:


- 3) հավատարմագրման մերժման որոշման ընդունման դեպքում.
- 4) ՀԳՄ-ի լուծարման դեպքում.
- 5) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ՀԱՄ-ի կողմից ՀԳՄ-ի հավատարմագրման վերաբերյալ համապատասխան որոշման ընդունումը, եթե այն կողմերից մեկը վաղաժամկետ չի լուծի:
- 6.2. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
- 6.3. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած վեճերը և (կամ) տարաձայնությունները կողմերը պարտավորվում են լուծել բանակցությունների միջոցով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճը լուծելու դատական կարգով:
- 6.4. Պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն ունեն իրավաբանական ուժ, եթե դրանք կատարված են գրավոր համաձայնագրով:
- 6.5. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:


7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Համապատասխանության գնահատման մարմին ----- (կազմակերպության անվանումը)	Հավատարմագրման ազգային մարմին «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ
----- (իրավաբանական անձի գտնվելու և գործունեության իրականացման վայրը)	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 49/2
Հեռախոս ----- Ֆաքս -----	Հեռախոս ----- Ֆաքս -----
Բանկի անվանումը h/h ----- ՀՎՀՀ -----	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ h/h 1930044382170100 ՀՎՀՀ 00116673
Տնօրեն՝ ----- (անուն, ազգանուն, ստորագրություն) Կ.Տ. « _____ » « _____ » 201 թ.	Տնօրեն՝  (անուն, ազգանուն, ստորագրություն) Կ.Տ. « _____ » « _____ » 201 թ.



Հավելված N _____
 «_____» «_____» 201 թ.
 N - ՄՊ պայմանագրի

Հ/հ	Հավատարմագրման գործընթացի անվանումը	Գումարը
1		
2		
3		
Ընդհանուր		

Համապատասխանության գնահատման մարմին ----- --(կազմակերպության անվանումը)	Հավատարմագրման ազգային մարմին «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ
----- ----(իրավաբանական անձի գտնվելու և գործունեության իրականացման վայրը)	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 49/2
Բանկի անվանումը h/h ----- ՀՎՀՀ -----	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ h/h 1930044382170100 ՀՎՀՀ 00116673
Տնօրեն՝ ----- (անուն, ազգանուն, ստորագրություն) Կ.Տ. «_____» «_____» 201 թ.	Տնօրեն՝  (անուն, ազգանուն, ստորագրություն) Կ.Տ. «_____» «_____» 201 թ.

